



զձեր մորորութիւնը (իմա՝ ի ձերմէ մորորութեան) սրտի մտօք դարձ[ուս]լիք ի ճշմարտութիւն երեւելի մերոյ դիւցազնական օրինացս, ի մեծութիւն եւ յաւազութիւն հասուցից» (15) :

Շլացած այս խոստումներէն ի Դուռն կը մեկնի Վահան Սիւնեաց տէրը :

«ՎԱՍԱԿ», «ՄԱՐԳՊԱՆ» = ՎԱՀԱՆ ՍԻՆԻՆ

Եղիշէի այժմեան խմբագրութեան մէջ չենք գտներ յօրինուածական դասաւորութեամբ տեղեկութիւններ, որոնք տային մեզի Վասակի անձին որպիսութիւնը : Տեղեկութիւնները, զորոնք խմբագիրը կը հաղորդէ, շատ ցիր ու ցան են : Անոնք առանց տարակուսի առնուած են Սկզբնագրէն, եւ ունէին չուն ներքին կապակցութիւն : Խմբագիրը, որ կը ձգար Ղազարի հետքով ընթանալ, Սկզբնագրէն քաղած հանած է հատուածներ, որոնք ի հետուստ կամ ի մերձուստ ունէին նմանութիւն Ղազարի Վասակին գործունէութեան հետ, եւ դասաւորած է զանոնք «Վասակ» մը ձեւելու համար : Ի հարկէ այս Վասակը ի հետուստ անգամ չունի Ղազարի Վասակին նմանութիւնը, բայց եթէ միայն անունով :

«Վասակի» իսկական գէմքը, այնպէս ինչպէս եղած է Եղիշէի Սկզբնագրին մէջ, դուրս կորցելու համար, անհրաժեշտ կը համարիմ նախ համարել այն ցիր ու ցան վայրավատին սեղիքները, որոնք «Վասակի» անձին կը հային եւ ապա անցնիլ անոնց վերլուծութեան :

ա. «Մեծապէս պատուեցէք զգա՝ առաւել քան զարժանն իւր : Հաւատացէք զմա զաշխարհն Վրաց . հարցէք եթէ զո՞հ իցեն զգմանէ : Ետուք զմա գտէրութիւնն Սիւնեաց . լուսութեւ յազգականաց այտի դորա, զի՞նչ պատմեն զգմանէ : Արարէք զգա մարդպան Հայոց . զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր՝ զա ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն» (105) . կ'ակնարկուի 571ի ապստամբութեամբ Հայաստանի ենթարկուելը Կայսեր իշխանութեան :

բ. «Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենդութեամբ եւ բտութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ եւ յինքն տարաւ գտէրութիւնն իբրեւ քրտիկար յարքունիս» (106) :

գ. «Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին կորորոզիք երկուէին նորա ի սուրբ ուխտին առաքելութեան . գրեաց եւ եցոյց վասն նոցա յարքունիս եւ էառ իշխանութիւն ի վերայ

կենաց նոցա . մերժեաց եւ եհան զնոսա յաշխարհէն, զի մի այլ զարձցին անդրէն» (73—74) :

դ. «Զբովանդակ զիւր [բոլոր] աշխարհն ապստամբեցոյց [յուրացութիւն], ոչ միայն ըստ աշխարհին բազմութեանն, այլ եւ զբազումս յուխտէ Եկեղեցւոյն» (71) :

ե. «Որպէս եւ նորա իսկ յառաջագոյն դատեալ եւ որոշեալ էր ի միարանութենէն Հայոց՝ եկն եւ յանդիման եղեւ (Միհրներսեհ մեծ հաղարսպետին ի Փայտակարան . իմացիր արքայից արքային ի Տիրոսն) . եւ սուզէր զիւր հաւատարմութիւնն (առ արքայն) եւ զՀայոց [անիրաւ ապստամբութիւնն]» (70) :

զ. 571ի ապստամբութենէն ետքը առ թագաւորն ի ձմերոցն ուղարկուած հայ եւ պարսիկ խառն պատգամաւորք «խօսէին ընդ նմա (թագաւորին) եւ ցուցանէին զամենայն վնասն որ եղեւ . . . եւ իբրեւ զայս ամենայն բովանդակ ցուցին նմա, միարան լինէր ամբաստանութիւն երկոցունց կողմանցն . . . որպէս զուր եւ տարապարտուց նեղեաց զնոսա (զՀայս մոզպետն) ի հայրենի օրինացն յետս կալ . եւ զխաբէութիւնն ապստամբին Վասակայ, ո՞րպէս Հայոց բանիւ խաբեաց զթագաւորն՝ յանձն առնուլ < Հայոց > զմոզութիւն . իբրեւ չեւ էր ուրուք ընդ նմա բանս եղեալ, նա յանձնէ սուտակասպաս լինէր» (62) :

է. Հալածեաց եւ փախոյց զամենայն միայնակեացս աշխարհին < Սիւնեաց >, ոյք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւնն նորա : — Որ արար եւ կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ ճշմարտութեանն . եւ զոր ինչ ոչ զեւանէին անօրէն հեթանոսքն՝ իմացուցանէր նոցա [եւ] վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ ո՞րպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց» (74) :

ը. Եղիշէ Մոզպետի բերանը կը զնէ հետեւեալ խօսքերը, ուղղուած Մարդպանին (Վասակ = Վահան) . «Դու որ մարգպանդ ես աշխարհիս, պարտ էր քեզ փոյթ յանձին ունել զբել եւ ցուցանել յարքունիս զմիարանութիւն բռնութեանս . . . Դու որ ի մանկութեմէ յայդմ օրէնս սնեալ էիր եւ ոչմարիտ գիտէիր զվնդութիւն մարդկանդ . . . ընդէ՞ր գայդ ամենայն հաւատեալ յանդիման չասացեր ցրագաւորն : Քանզի ամենայն նախարարացն աւազ դու էիր եւ զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր < արքայից արքայ > մարդպանութեամբ . . . Արդ եթէ . . . քեզ կամք չեն ունել զմոզութիւնդ, մի ինչ պատկառեր

զու երկիւղիւ յարքայէ . ես գրեմ եւ ցուցանեմ ի Դուռն» (47) :

բ. Մարդպանը կը պատասխանէ Մոզպետին թէ Հայոց զիմարտութենէն պէտք չէ յաւարեկիլ . եւ ինքը «անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր գունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոզաց եւ Մոզպետին» (48) :

Եղիշէի այս տողերէն կ'իմանանք . ա. «Վասակ» պաշտօնավարած է ժամանակ մ'ի վերս :

բ. Քսութեամբ սպանել տալով իւր հօր-եղբայրը՝ տիրացած է Սիւնեաց աշխարհին :

գ. Արտաքսած է երկրէն իւր եղբորորդիները :

դ. Անիկա «յառաջագոյն», այս ինքն 571էն յառաջ, «գատեալ եւ որոշեալ էր ի միարանութենէն Հայոց», ուրիշ խօսքով՝ «զբովանդակ զիւր [բոլոր] աշխարհն ապստամբեցոյց < ի Հայոց >, ոչ միայն ըստ աշխարհէն բազմութեանն, այլ եւ զբազումս յուխտէ Եկեղեցւոյն», այսինքն բաժնեց, անջատեց Հայոց միարանութենէն Սիւնեաց թէ՛ աշխարհն եւ թէ՛ Եկեղեցին :

ե. Վասակ կը ներկայանայ թագաւորին եւ կը հաւաստէ անոր «Հայոց բանիւ», թէ արամաղիր են Հայք ընդունելու «զօրէնս մոզպետն» : Կ'ուրանայ ինքը հաւատքը . փոքրէն կ'ընդունի Հայոց մարդպանութիւնը :

Կան հոս, ստոյգ է, զձեր, զորոնք ունի նաեւ Ղազարի Վասակը, բայց կան նաեւ այնպիսիներ, որոնք չեն կրնար ոտնկոխ դառնել յանձին Վասակի : Ղազար, որ այնպէս ճշգրիտ նկարագրած է 451ի պատերազմին պատճառները, եւ ոչ նշմարը կու տայ, թէ Վասակ «յառաջագոյն գատեալ եւ որոշեալ էր ի միարանութենէն Հայոց» :

Եղիշէի պատմութեան մէջ ինչպէս կեղծ են բազմաթիւ անուններ, նոյնպէս կեղծ է Վասակի անունը :

Սիւնիքը Հայոց միարանութենէն ապրտամբեցնողին հարազատ անունը պահպանած է մեզի Սեբիոս Բագրատունեաց եպիսկոպոս, որուն են տողերս .

«Յայնժամ յառաջ քան զայս (կ'ակնարկուի 571ի Հայոց ապստամբութիւնն յարքայէն) ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց . եւ խնդրեաց ի Սոսրովայ, յարքայէն Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին

Սիւնեաց ի Դրենայ ի Փայտակարան քաղաք . եւ կարգեացէ զքաղաքն ի շահմար Ատրպատականի . զի մի եւս կոչեացի անուն Հայոց ի վերայ նոցա : Եւ կատարէր հրամանն» (26) :

Եղիշէի «յառաջագոյն» եւ Սեբիոսի «յառաջ քան զայսը» կ'ընդգրկեն զիրար ժամանակագրօրէն ճշգրիտ : Նոյնպէս «գատեալ եւ որոշեալ էր ի միարանութենէն Հայոց» կամ «զբովանդակ զիւր աշխարհն ապստամբեցոյց < ի Հայոց >» ըստ իմաստին կը ծածկեն Սեբիոսի արտայայտութեան ձեւը «ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց» :

Տարօրինակ չի՞ չնչեր Սեբիոսի արտայայտութիւնը՝ «անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց» . ինձ կը թուի թէ պատմաբանը Սիւնեաց Վահան իշխանը կ'ընդգրկէ թէ «ոչ ըստ զիրը այս շեշտով իմացնել կ'ուզէ թէ «ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին» :

Կը համարիմ, թէ աւելորդ է հոս կուտել ուրիշ ապացոյցներ, թէ Եղիշէի այժմեան խմբագրութեան «Վասակը» Սկզբնագրին մէջ վախան էր : Խմբագիրը առանց մեծ յօգնութեան, երկու գիր միայն փոխելով յաջողած է Վահանէն Վասակ մը շինել :

Վահան անուան յայտնաբերութիւնն Եղիշէի Պատմութեան մէջ ոչ միայն այժմեան խմբագրութեան անիմաստ էջերուն իմաստ կը պարզուէ, այլ եւ նպատակը մատուցանէ լուսաւորելու Հայոց պատմութեան այնքան կարեւոր դարասկիզբ մը, որ 571ին ունի իւր երակէտը :

Սիւնեաց աշխարհի իշխանական դասին վրայ հետեւեալ տանուտէրերը կը յիշուին 2. դարու ընթացքին .

ա. Արտաշիւր, որ 510ին ներկայ էր Դրենայ ժողովին իբրեւ «Ս. Սիւնեաց տէր» (Գիրք թղթոց, 42) :

բ. Միհր-Արտաշիւր, որուն գրած է Յովհ. կաթողիկոս (557—574) թուղթ մը իբր 568ին . որուն սկիզբն է . «Քրիստոսի պայծառացելոյ սիրելի եղբօր եւ աթոռակցի մերոյ տեսուն վրթանիսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ մեծապայելի եւ փառաւորելոյ Միհր-Արտաշիւրի Արևեաց տեսուն» (Գիրք թղթոց, էջ 78) : Ասիկա առանց տարակուսի նախորդին թոռն էր : Անձանօթ կը մնայ իր հօր անունը : Միհր-Արտաշիւրի մահը պատահած պէտք է ըլլայ 568ին :





մը գտնուելը ի թիւս Վասակի եղբայրներուն, անշուշտ անյիշատակ պիտի չթողուր Փարպեցի. որ այլուր, թուելով կապեալ նախարարները կը յիշէ «ի տոհմէն Արծրունեաց ներշապուհ եւ Շաւասայ եւ Շնդին եւ Պարզեալ եւ Տաճատ» (86): Այս Շաւասայը, որ ուխտագահներու թուին մէջ էր, ի հարկէ չէր կրնար ուրացեալին հետ նոյնացուիլ:

Պոսորով յայտնաբերելով յանձին Սիւնեաց Վահան իշխանին իւր պետական ծրագիրներն ի գլուխ հանելու համար ինքնամատոյց մարզը, կ'անուանէ զանիկա «Հայոց մարզպան», կամ ըստ թովմայի կը շնորհէ անոր «գիշխանութիւնն Հայոց»: Ուստի այստեղ Շաւասայ եւ Վահան կը նոյնանան:

ՎԱՀԱՆ—ՇԱՒԱՍՊ—ԴԵՆՇԱՊՈՒՀ

«Եւ զայս արարեալ, կը գրէ Եղիշէ, բազում այրեւծի գումարէր ընդ նմա (տայ. նոցա, իմա՝ Մարզպանին Հայոց) եւ ի մողուցն ոչ սակաւ՝ աւելի քան եօթն հարիւր վարդապետս յէր ընդ նոսա. եւ զմեծ ոմն իշխան՝ Մողպետ կացուցանէր ի վերայ նոցա» (39): Այրեւծիոյն թիւը աւելի ճշգիւ կը յիշէ Յովհ. Եփեսացի. «Յետ այս ամենայնի Մարզպան գոմն յաշխարհս մեր առաքէր եւ երկուս հարս այրեւծիոց ընդ նմա» (§ 47, 3):

Այս տեղոյն կը հայի ինչ որ Եղիշէ կը գրէ ի մասին Դենշապուհի առաքման. «Յայս ամենայնի վերայ այլեւս չարութիւն խորամանկեաց <Պոսորով>. զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ» (19):

Թովմաս Արծրունի շարունակելով խօսքը Շաւասայ Արծրունեայ մասին, «դառնայ, կ'ըսէ, ի Հայս ընդ իւր անելով [մարզպան] զՎնդոյ Պարսից մողպետ» (77). որոնց առաջին գործն կ'ըլլայ «չինել ի դուռն քաղաքին Արտաշատու գործողական մեհեանն» (78): Ասողիկ Ատրուշանի կ'առուցումը Դենշապուհի կը վերագրէ, իսկ տեղը ի Ռշտունիս կը նշանակէ: Քիչ յետոյ յիշելով Սուրէնը՝ կը գրէ. «Եւ ապա Պոսորով արքայ Պարսից զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր-Շնասայ հանէ ի հազարապետութիւն Հայոց» (84):

Ազգիւրներն այս տեղ անուններ եւ տիտղոսներ կը կուտեն, որոնք անուր են այլուստ եւ կը ստեղծեն խզվրտիւն մը ձայներու, ուս-

կից դժուարին է առաջին բերան ներքին կապակցութիւն մը դուրս բերել, որչափ որ ալ պատմութիւնը մի եւ նոյն առանցքի վրայ դառնալ թուի: Փորձենք սակայն լուսարանել:

Տեսանք վերագոյն թէ Եղիշէի Վասակը նոյն է Մարզպանի հետ, որ կը նոյնանայ յանձին Սիւնեաց Վահան իշխանին: Այս Վահանին հետ նոյն ելաւ նաեւ Շաւասայ: Եղիշէ այժմ այս Վասակ—Վահան—Շաւասայը նաեւ Դենշապուհ կ'անուանէ, տիտղոսով «մի ոմն ի հաւատարիմ ծառայից» արքային, որ «ի գործ» ուղարկուած է Հայաստան: Ասիկա, ինչպէս իր գործունէութեան ընթացքէն կ'իմանանք, «գրգռեաց, յարոյց զամբաստանութիւն ի վերայ» Հայոց հազարապետին եւ «հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ <հազարապետ> ան յաշխարհն եւ միւս եւս մողպետ դատաւոր աշխարհին» (Եղիշէ, 19): Բնագիրը կ'երեւայ թէ փոքր ինչ աղաւաղուած է հոս. պէտք է իմանալ «փոխանակ նորա <զմեծ ոմն իշխան> պարսիկ՝ <հազարապետ> ան յաշխարհն <որ եւ> Մողպետ դատաւոր աշխարհին»: Մողպետը Հայաստան բերողն էր Վասակ—Վահան Մարզպան, իսկ ըստ թովմայի՝ Շաւասայ: Այդ Մողպետը, զոր թովմաս «Վնդոյ» կը կոչէ, Շաւասայի հետ ի Դուռն Արտաշատու գործողական մեհեանն կը կանգնէ: Ասողիկի համաձայն «գործողական հուրն վառեաց» Դենշապուհ: Իսկ «մեծ ոմն իշխան Մողպետ», զոր Եղիշէ ընկերացուցած էր Մարզպանին եւ զոր Դենշապուհ բերած էր իրրեւ «Հազարապետ» եւ «Մողպետ», «ազգականն» էր Պոսորովը, «Սուրէն» տոհմէն, զոր արքայն հանած էր «ի հազարապետութիւն Հայոց», ինչպէս Ասողիկ կարդացած է իւր աղբիւրին մէջ:

Այս մեկնութեամբ Դենշապուհ եւ Շաւարշ կը նոյնանան Վահան Մարզպանին հետ:

Դենշապուհի եւ Շաւասայի անձանց նոյնութիւնը աւելի պայծառ ընծայելու համար կարելոր կը համարիմ գէժ առ գէժ համեմատութեան զնել Ստեփանոս Ասողիկի եւ թովմաս Արծրունեայ ի բանից Աբրահամու Մամիկոնեանց եպիսկոպոսի յառաջ բերած տեղեւորութիւնը, որոնք կը հային Շաւասայ—Դենշապուհի եւ Վնդոյ—Սուրէնի. ստորեւ կը գետեղեմ նաեւ Եղիշէի ի մասին Դենշապուհի եւ անոր գործերուն զբաժ հատուածը:

Ասողիկ, 84.

Ըստ իշխանաց կարգին յետ Մեծէթին Գնունայ պարսիկ մարզպանը եկին ի Հայս: Նախ Դենշապուհ, որ զնմուրութիւնն շատացոյց եւ գործողական հուրն վառեաց ի Ռշտունիս. եւ ստիպէր գործառնեայ կրակի երկիր պաղանել. յաղագս որոյ բազումք մեհեան:

Եւ յետ նորա վարագրատ ոմն պարսիկ ի նմին տոհմէ...:

Եւ ապա Պոսորով արքայ Պարսից զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր Շնասայ (= Ճիհովր Շնասայ) հանէ ի հազարապետութիւն Հայոց. որ եկեալ կալաւ զերկիրս մեր՝ յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի... զարս եւ զկանայս մատնայր ընդ կանայս ազատաց՝ ոչ առնելով զայրն սէր կնոջ իւրոյ: Ընդ որ զայրացեալ Վարդանայ ըրեղէի... սուսերահար սանէր զՍուրէն մարզպան:...

Թովմաս Արծրունի, 77—78.

Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց... սպա մարզպանը Պարսից կալեալ տիրէին աշխարհիս...:

Ընդ նոյն ժամանակ... Շաւասայ Արծրունի... խորհեցաւ գորիւրն Հայոց. եւ ելեալ զնայ... առ Պարզ... եւ յանձն առեալ ինքնակամ... զորէն մարզպետաց... եւ խնդրեալ յարքայէն զիշխանութիւն Հայոց: Եւ նորա... կատարեալ զինդիրն... դատարեալ զինդիրն... զտոնէութեանն եւ փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւելի քանդել զեկեղեցիս մեր՝ յոյժ հարստահարելով զնախարարս մատնայր ընդ կանայս ազատաց՝ ոչ առնելով զայրն սէր կնոջ իւրոյ: Ընդ որ զայրացեալ Վարդանայ ըրեղէի... սուսերահար սանէր զՍուրէն մարզպան:...

Այս լուր գտնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան... յանկարծօրէն... հասին ի վերայ ծօրէն... հասեալ Շաւասայը եւ մարզպանին Շաւասայը... (Շաւասայ սուրբազան... վնդոյ սերահար լինի. վնդոյ հրակէզ):

Եղիշէ, 19:

Եւ յայս ամենայնի վերայ այլ եւս չարութիւն խորամանկեաց: Չմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի. զոչոյն բերեալ զմեծ թագաւորին եւ խաղաղասէր կեղծաւորութեամբ <կամէր> աշխարհագիր գասէր կեղծաւորութեամբ <կամէր> թողութիւն հարկաց տանել ամենայն երկիրն Հայոց՝ ի թողութիւն հարկաց

եւ ի թեթեւութիւն ծանրութեան այրեւծիոց: Թէպէտ եւ ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդը չարագոյն (!) ցուցանէին (!):

Ա. զազատութիւն եկեղեցւոյն արհանէր ի ծառայութիւն: Բ. միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհազրուէ կարկ: Գ. զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց: Դ. Բանարկութեամբ զնախարարեանն կարկ ընդ միմեանս. եւ յամենայն տան արար խոտովութիւն: Եւ զայս ամենայն տանք, թերեւս զմիտրանուութիւնն քակեցէ եւ զուխտն եկեղեցւոյն ցրուեցէ եւ ինքն քակեցէ եւ զուխտն եկեղեցւոյն ցրուեցէ եւ զինքնակամ վասնեցէ զմիայնակեացս փախուցէ եւ զչինակամ վասնեցէ եւ առ յոյժ աղբատութեանն՝ աղամայ զիմեացն յօրէնս մողուց: Եւս չարագոյն Ե. ն. բանդի որ հազարապետ աշխարհին էր՝ իրրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից. զըզուեաց, յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա. եւ հանեալ զնա ի գործայն՝ փոխանակ նորա պարսիկ ան յաշխարհն եւ միւս մողպետ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն եւս մողպետ դատաւոր աշխարհին: Բայց սակայն թէպէտ եւ ամենայն գործքս այս դժեմայ էին, շեւ էր ուրուք ձեռնարկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ եւ ոչ որ ընդդիմացաւ նմա, թէպէտ եւ էր ծանրութիւն հարկացն:

Համեմատութիւնս ցոյց կու տայ. — ա. Դենշապուհ «զնմուրութիւնն շատացոյց». Ճիհովր—Շնասայ «չնայր ընդ կանայս աղատաց, ոչ անելով զայրն սէր կնոջ իւրոյ» (Մաղապիկ վարդապետութեան հետեւող (մը!)). կը համարիմ թէ նոյն միտքն է զոր կ'արարէր թէ Դենշապուհ «յամենայն տան արար խոտովութիւն»:

բ. Դենշապուհ «գործողական հուրն վառեաց ի Ռշտունիս» (Աս.). Շաւասայ եւ Վնդոյ Մողպետ «չինեն ի դուռն (Արտաշատ) քաղաքին գործողական մեհեանն» (Թովմ.). զարքայն «Մարզպանին» կը վերագրէ Յովհ. Եփեսացի «Մարզպանին» ի Դուռն—Արտաշատ: կրակատան շինութիւնն ի Դուռն—Արտաշատ:

գ. Դենշապուհ «ստիպէր զքրիստոնեայս կրակի երկիր պաղանել. յաղագս որոյ բազումք մեհեան» (Աս.) = «Բազում այն է որ գտնուեալ զնախարարեան ճգնութեամբ վկայեցին» ի մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին» ի ձեռն Շաւասայի եւ Վնդոյի (Թովմ.):

դ. Ճիհովր—Շնասայ «եկեալ կալաւ զերկիրս մեր յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց» (Աս.) = «Ձեռնամուխ եղեն (Շ. եւ Հայոց)... զարս եւ զկանայս մատնել ի բանդս <եւ> ի խոչտանդանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ» (Թովմ.) = Եղիշէ կը թուէ հարկապահանջութեան տեսակները, զորոնք զբաւ Դենշապուհ:



